ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2026 թվականի հունվարի 12-ի թիվ 3 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-26/07

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ կարիքների համար փոքրածավալ բեռնատարների (պիկապների) ձեռքբերման նպատակով կազմակերպված ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-26/07 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 09.01.2026թ. ստացված հարցադրումները և դրա վերաբերյալ 12.01.2026թ. տրամադրված պարզաբանումները՝

ՀԱՐՑՈՒՄ 3. Հարգելի հանձնաժողով տեխնիկական բնութագիրը փոխելով ոչ բոլոր հարցերին եք պատասխանել: Ամեն դեպքում JAC T9 մոդելը հանելով և Toyota մակնիշը ավելացնելով միևնույնն է ձեր կողմից նկարագրված տեխնիկական բնութագրին համապատասխանում է նշված մոդելներից միայն մեկը՝ NISSAN NAVARA-ն, այսինքն մրցույթին կարող է մասնակցել միայն NISSAN NAVARA-ի մատակարարը: Հետևաբար սույն ընթացակարգով խախտվում են գնման առարկայի բնութագրերի օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջները: Բացի այդ փոփոխության արձանագրությունում բացակայում է հետևյալ նախադասությունը, որը սակայն ներառված է Հրավերի Պայմանագրի հավելվածի տեխնիկական բնութագրում՝ Մատակարարի կողմից պետք է ներկայացվեն մատակարարվող ապրանքների շահագործման (այդ թվում՝ մեքենայի շարժիչի և հիդրավլիկ համակարգի համար օգտագործվող յուղերի տեսակը և բնութագիրը՝ ձմեռային և ամառային ժամանակահատվածների համար) ինչպես նաև պահպանման պայմանները:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ 3. Հարգելի գործընկեր, կատարելով ընդլայնված ուսումնասիրություն կհամոզվեք, որ ոչ միայն NISSAN NAVARA-ն է համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին, նշված մյուս արտադրողները նույնպես ունեն մոդելներ, որոնք ունեն նշված չափորոշիչները: Ինչ վերաբերվում է հարցման վերջին նախադասությանը նշենք, որ փոփոխման արձանագրության մեջ միայն նշվել են այն բառերը (նախադասություն, պարբերություն), որոնք ենթարկվել են փոփոխման, իսկ մյուս չափորոշիչները մնացել են անփոփոխ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-26/07 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Ն. Ավագյանին:

Հեռախոս՝ 011 514 745:

Էլեկտրանային փոստ՝ gnumner.kanach@yerevan.am

ОБЪЯВЛЕНИЕ
о разъяснении приглашения

Настоящий текст объявления утвержден решением Оценочной комиссии
№ 3 от 12.01.2023 года и опубликовывается
в соответствии со статьей 29 Закона Республики Армения "О закупках"

Код процедуры " KSHMP-EAAPDzB-26/07 "

Оценочная комиссия процедуры закупки под кодом "**KSHMP-EAAPDzB-26/07**", организованной с целью приобретения товаров для нужд ОНКО "Озеленение и охрана окружающей среды", ниже представляет запрос, полученный 09.01.2026г. и предоставленный 12.01.2026г. по нему разъяснение относительно приглашения по тому же коду:

Запрос 3. Уважаемая Комиссия, изменив технические характеристики, Вы не ответили на все вопросы. В любом случае, заменив модель JAC T9 на марку Toyota, вы добились того, что только одна из упомянутых моделей, NISSAN NAVARA, соответствует описанным Вами техническим характеристикам, то есть только поставщик NISSAN NAVARA может участвовать в тендере. Следовательно, данная процедура нарушает требования обеспечения конкуренции и исключения дискриминации, предусмотренные законом о характеристиках предмета закупки. Кроме того, в протоколе изменений, который включен в технические характеристики Приложения к приглашению к заключению контракта, отсутствует следующее предложение: Поставщик должен представить условия эксплуатации поставляемого товара (включая тип и характеристики масел, используемых для двигателя и гидравлической системы автомобиля в зимний и летний периоды), а также условия хранения.

Разъяснение 3. Уважаемый коллега, проведя всестороннее исследование, Вы убедитесь, что не 3только NISSAN NAVARA соответствует техническим характеристикам, изложенным в приглашении, но и другие упомянутые производители также имеют модели, соответствующие указанным стандартам. Что касается последнего предложения опроса, отметим, что протокол изменений указывал только на слова (предложение, абзац), подлежащие изменению, в то время как остальные критерии остались без изменений.

Для получения дополнительной информации, связанной с настоящим объявлением, можно обратиться к секретарю Оценочной комиссии Н. Авагян под кодом " **KSHMP-EAAPDzB-26/07** ".

Телефон: 011 514 745:

Электронная почта: gnumner.kanach@yerevan.am